Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների Կոնգրես

... հասանելի ժողովրդավարություն մեր քաղաքների և տարածքների սրտում

The Congress
Le Congrès

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

50 տարի շարունակ տեղական ժողովրդավարության առաջամարտիկ

Կոնգրեսին նախորդող Տեղական իշխանությունների համաժողովը իր առաջին նստաշրջանն անցկացրեց Ստրասբուրգում 1957թ. հունվարի 12-ին՝ Ժակ Շաբան-Դելմայի (Ֆրանսիա) նախագահությամբ: Այդ ժամանակից ի վեր Կոնգրեսը դարձավ Եվրոպայում իրական տեղական ժողովրդավարության կերտման առանցքային դերակատար:

1975թ. անդամ պետություններում տարածքային կարևոր բաղկացուցչի ի հայտ գալու հետ մեկտեղ Տեղական իշխանությունների համաժողովի շրջանակն ընդլայնվեց՝ տարածքները ներառելու նպատակով:
Այսպես այն դարձավ Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների համաժողով՝ համախմբելով Եվրոպայի բոլոր տարածքային համայնքները:

Ժակ Շաբան-Դելմա (Ֆրանսիա), 1957թ. հունվարի 12-ին տեղի ունեցած Տեղական իշխանությունների համաժողովի առաջին նախագահ:

Հիմնադիր տեքստ

Տեղական ժողովրդավարության ամրապնդումը և անդամ պետությունների կողմից դրա մեծացող դերի ճանաչումը հանգեցրին Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ընդունմանը 1985թ. (ՏԻԵԽ):

Նոր փուլ Վիեննայի գագաթաժողովից հետո

1994թ. ականատես եղավ տեղական և տարածքային ժողովրդավարության խթանման մի նոր փուլի, երբ ստեղծվեց Եվրոպայի խորհրդի այժմյան Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը, որը փոխարինեց «Համաժողովին»:

Ճանաչում պետությունների ղեկավարների կողմից

2005թ. Վարշավայի գագաթաժողովին Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարները վերահաստատեցին տեղական և տարածքային ժողովրդավարության նշանակությունը Եվրոպայում առողջ ժողովրդավարության համար և ընդգծեցին Կոնգրեսի մեծ դերն այս առաքելության իրականացման գործում:

Գործիքների ամրապնդում

Տարածքային ժողովրդավարության տեղեկագիրքը մշակվել է 2009թ.: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն խրախուսում է անդամ պետությունների կառավարություններին հաշվի առնել այս տեքստը իրենց քաղաքականությունն ու բարեփոխումներն իրականացնելիս: Կոնգրեսը հետամուտ է ՏԻԵԽ-ի խթանման իր աշխատանքին, որը ներկայում ներառում է Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունները:

«Որքան տեղյակ եմ, ժողովրդավարական պետությունների պատմության մեջ առաջին անգամն է, որ տեղական իշխանությունների ներկայացուցիչներին հրավիրել են հայտնել իրենց կարծիքը [...], կառավարությունների համաձայնությամբ ստեղծվող կառույցներում իրենց մասնակցության հնարավոր պայմանների վերաբերյալ»:

Հատված 1957թ. հունվարի 12-ին Ժակ Շաբան-Դելմայի ելույթից:

Տեղական ժողովրդավարության մշտադիտարկում

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կիրառման գնահատումը յուրաքանչյուր անդամ պետությունում Կոնգրեսի առաքելության հիմքում է:

Այս մշտադիտարկումը հնարավոր է դարձնում անդամ պետությունների իշխանությունների հետ կառուցողական քաղաքական երկխոսությունը տեղական և տարածքային ժողովրդավարության խնդիրների շուրջ: Կոնգրեսը հանձն է առնում կանոնավոր ընդհանուր մշտադիտարկումներ իրականացնել անդամ պետություններից յուրաքանչյուրում: Այն նաև կարող է ուսումնասիրել Խարտիայի որևէ առանձին մաս: Բացի այդ, այն կարող է իրականացնել հրատապ փաստահավաք առաքելություններ՝ մտահոգության արժանի առանձին դեպքերի ուսումնասիրման համար: Կոնգրեսի կողմից կազմված զեկույցներն ու ընդունված հանձնարարականները և բանաձևերը տեղեկություններ են տրամադրում կառավարություններին, խորհրդարաններին, ասոցիացիաներին, ընտրված ներկայացուցիչներին և լրատվամիջոցներին առանձին երկրներում տեղական և տարածքային ժողովրդավարության իրավիճակի և, մասնավորապես, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ: Բազմաթիվ օրենսդրական բարեփոխումներ են սկսվել անդամ պետություններում մշտադիտարկման այս գործունեության արդյունքների հիման վրա:

Կոնգրեսի երկու գերակայություններն են տեղական և տարածքային ընտրությունների դիտորդությունը և Տեղական ինքնակառավարման խարտիայի իրականացման մշտադիտարկումը:

Տեղական և տարածքային ընտրությունների դիտորդություն

Կոնգրեսը պարբերաբար դիտարկում է տեղական և տարածքային ընտրությունները, հատկապես Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում:

Դիտորդական գործունեությունը, որը ներառում է թե՛ քվեարկությունները և թե՛ ընտրարշավները, հնարավոր են դարձնում համագործակցություն հաստատել ամենաբարձր մակարդակում՝ քաղաքական կուսակցությունների և խմբերի, ընտրական հանձնաժողովների, լրատվամիջոցների և ՈԿԿ-ների հետ: Կոնգրեսի կողմից ընտրությունների դիտորդության միջոցառումներն իրականացվում են Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի և Վենետիկի հանձնաժողովի հետ համագործակցությամբ, մասնավորապես՝ Ժողովրդավարական ընտրությունների խորհրդի միջոցով, բայց և միջազգային այլ կազմակերպությունների հետ, ինչպիսին Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակն է: Եվրոպական միության Տարածաշրջանների հանձնաժողովը նույնպես հրավիրվում է մասնակցելու Կոնգրեսի կողմից իրականացվող դիտորդական առաքելություններին:

Հետ-մշտադիտարկում և հետ-դիտորդություն

Ընտրությունների մշտադիտարկումից և դիտորդությունից հետո Կոնգրեսը, իր հանձնարարականների կատարումը երաշխավորելու նպատակով, շարունակական երկխոսություն է ծավալում անդամ պետությունների հետ:

Համագործակցություն և գործընկերություն

Կոնգրեսը խթանել է համագործակցությունն ու գործընկերությունը անդամ պետությունների և այլ հաստատությունների ու եվրոպական ասոցիացիաների հետ՝ տարածքային ժողովրդավարության ամրապնդման նպատակով: Այս ոլորտում առաջարկվող միջոցառումները միտված են երաշխավորելու Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի և Կոնգրեսի հանձնարարականների հետագա իրականացումը:

Կոնգրեսը կազմակերպում է Ալբանիայի ներկայացուցիչների մասնակցությունը NEXPO 2013 միջազգային քաղաքային տոնավաճառին Խորվաթիայում:

Հիմնվելով տեղական և տարածքային ժողովրդավարության իր մշտադիտարկման, ինչպես նաև ընտրությունների դիտորդության արդյունքների վրա՝ Կոնգրեսն իր փորձառությունն է առաջարկում անդամ պետություններին և իր անդամների միջոցով առաջարկում է գործնական և քաղաքական փորձի տրամադրում, մասնավորապես՝

- իրավական և ինստիտուցիոնալ համակարգի գնահատում,
- նոր օրենսդրության և քաղաքականության մշակմանն աջակցություն,
- լավ գործելակերպերի փոխանակում, գործընկերային քննարկումներ և փոխակտիվ սեմինարներ,
- առաջնորդության դասընթացներ տեղական և տարածքային ընտրված մասնակիցների համար:

Ելնելով խնդրո առարկա երկրներին բնորոշ իրավիճակից, ինչպես նաև տեղական իշխանությունների կարիքներից՝ միջոցառումներ կարող են կազմակերպվել հետևյալ ոլորտներում՝ տեղական ընտրված ներկայացուցիչների դերը և պարտականությունները, էթիկան քաղաքականությունում և որոշումների կայացման մեջ, քաղաքացիների մասնակցություն, դրական քարոզչություն (կապված տեղական և տարածքային ընտրությունների հետ), խորհրդակցություն և երկխոսություն կենտրոնական և տեղական իշխանությունների միջև, տեղական մակարդակում մարդու իրավունքների իրականացման փորձի խթանում և փոխանակում, ռեգիոնալացման գործընթաց, միջսահմանային համագործակցություն:

Ներդրում գործողությունների ծրագրերում

Անդամ պետությունների համար Կոնգրեսի նախագծած ծրագրերը Եվրոպայի խորհրդի Գործողությունների ծրագրի ժողովրդավարական բաղադրիչի մասն են կազմում: Կոնգրեսն արդեն իրականացնում է ծրագրեր Ալբանիայում, Հայաստանում և Ուկրաինայում: Ծրագրեր են քննարկվում այլ անդամ պետությունների համար: Ավելին, Կոնգրեսն ակտիվ է Եվրոպայի խորհրդի հարևանության քաղաքականության ոլորտում, որն ուղղված է հարևան երկրներում, ինչպիսիք են օրինակ՝ Մարոկոն և Թունիսը, տարածքային և օրենսդրական բարեփոխումներին օժանդակությանը:

Ցանցեր և հանգույցներ

Կոնգրեսը նաև խթանել է լավ կառավարումն ու քաղաքացիների մասնակցությունը՝ աջակցելով տեղական իշխանությունների ասոցիացիաներին՝ նրանց եվրոպական ցանցերի (Եվրոպական տարածաշրջանների ասամբլեա - ԵՏԱ/AER, Եվրոպական համայնքների և տարածաշրջանների խորհուրդ - ԵՀՏԽ/CEMR) հետ սերտ համագործակցությամբ և խրախուսելով ցանցերի, մասնավորապես՝ Հարավ-արևելյան Եվրոպայի տեղական իշխանությունների ասոցիացիաների ցանցի (NALAS), Տեղական ժողովրդավարության գործակալությունների ասոցիացիայի (ALDA) և Տեղական և տարածքային իշխանությունների ուսուցողական կազմակերպությունների եվրոպական ցանցի (ENTO) ստեղծումը:

Սերտ գործընկերություն Եվրոպական միության հետ

2005թ. Կոնգրեսը և Տարածաշրջանների հանձնաժողովը ստորագրեցին համագործակցության մասին մի համաձայնություն, որի նպատակն էր «տեղական և տարածքային ժողովրդավարության առաջխաղացումը, լիազորությունների փոխանցումը և ինքնակառավարումը Եվրոպայում և (երաշխավորումը) հաստատված տեղական ու տարածքային լիազորությունների նկատմամբ հարգանքը ներպետական և եվրոպական իշխանությունների կողմից»: Այս համաձայնությունն ընդլայնվեց 2009թ.-ին՝ պաշտոնականացնելով երկու հաստատությունների միջև համագործակցության ոլորտներն ու մեթոդները:

Տարածքային իշխանությունների համաեվրոպական համաժողովը

Կոնգրեսն այն մարմինն է, որը ներկայացնում է Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների տեղական և տարածքային իշխանությունները:

Այն միակ եվրոպական մարմինն է, որին հանձնարարված է մշտադիտարկել տեղական և տարածքային ժողովրդավարության վիճակն ու զարգացնել տեղական և տարածքային ինքնակառավարումն ամբողջ Եվրոպայում: Հանդիսանալով Եվրոպայի համայնքների և տարածքների ձայնը՝ այն աշխատում է ամրապնդել տեղական ժողովրդավարությունը միաժամանակ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հետ համագործակցությամբ, խրախուսելով խորհրդակցություններն ու քաղաքական երկխոսությունն անդամ պետության կառավարության և տեղական ու տարածքային իշխանությունների միջև:

Կոնգրեսի ձեռքբերումները

Իր ստեղծումից ի վեր՝ Կոնգրեսը նպաստել է մի շարք միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի մշակմանը, որը դարձել է միջազգային պայմանագրի հենանիշ այս ոլորտում:

1985թ. անդամ պետությունների կողմից Խարտիայի ընդունումից հետո 2009թ. Ուտրեխտում (Նիդեռլանդներ) տեղական և տարածքային կառավարման համար պատասխանատու նախարարներն ընդունեցին Տարածքային ժողովրդավարության տեղեկագիրքը: Այս տեքստը սկզբունքների մի ամբողջություն է, որի վրա հենվում է Կոնգրեսը տարածքային ժողովրդավարությունը մշտադիտարկելիս:
Երկարաժամկետ հեռանկարում Կոնգրեսը ցանկանում է այն դարձնել ավելի պարտադիր բնույթ կրող գործիք, որը տարածքային մակարդակում կլինի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային համարժեք փաստաթուղթ:
Տեղական և տարածքային ժողովրդավարության ոլորտի այլ իրավական փաստաթղթեր են՝
Տարածքային համայնքների կամ իշխանությունների միջև անդրսահմանային համագործակցության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիան (1980թ.):
Տեղական մակարդակում հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին կոնվենցիան (1992թ.):
Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին եվրոպական խարտիան (1992թ.):
Եվրոպական քաղաքային խարտիան (1992թ.) և Եվրոպական քաղաքային II խարտիան. Նոր ուրբանիզացիայի մանիֆեստը (2008թ.):
Տեղական և տարածքային կյանքում երիտասարդների մասնակցության եվրոպական խարտիան (1992թ.) և Վերանայված Խարտիան (2003թ.):
Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիան (2000թ.):

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան սահմանում է ընդհանուր չափանիշներ՝ տեղական իշխանությունների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու և զարգացնելու համար: Խարտիան վավերացրած պետություններից պահանջում է համապատասխանել այս ոլորտում մի շարք պայմանների, սկզբունքների և գործելակերպերի: Այն ստորագրման համար բացվել է 1985թ. և ուժի մեջ է մտել 1988թ.: Խարտիան վավերացվել է Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների կողմից: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի տեքստը լրացնելու նկատառումով 2009թ. ընդունվել է քաղաքացիների մասնակցության վերաբերյալ լրացուցիչ Արձանագրություն: Բացվելով ստորագրման համար 2009թ. նոյեմբերի 16-ին և ուժի մեջ մտնելով 2012թ. հունիսի 1-ին՝ այս տեքստը նպատակ ունի Խարտիայի շրջանակներում ներառել տեղական իշխանության գործերին մասնակցելու յուրաքանչյուրի իրավունքը: Այս առումով այն համահունչ է Խարտիայի նախաբանին, որով ճանաչվում է, որ կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը ժողովրդավարական սկզբունքների մասն է կազմում, որոնք ընդհանուր են Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար:

Մեկ Կոնգրես և երկու պալատ՝ 200,000 համայնքի համար

Կոնգրեսը կազմված է երկու պալատից՝ Տեղական իշխանությունների պալատ և Տարածաշրջանների պալատ: Այն ունի 324 անդամներ և 324 տեղակալներ, որոնք բոլորն էլ նշանակվում են չորս տարով՝ ներկայացնելով Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների ավելի քան 200,000 տեղական և տարածքային իշխանությունների:

648 տեղական և տարածքային ընտրված ներկայացուցիչների հանդիպումը լիակազմ նիստում Ստրասբուրգում (Ֆրանսիա):

Կոնգրեսի ազգային պատվիրակությունները կազմված են Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների տեղական և տարածքային իշխանությունների ներկայացուցիչներից: Անդամները կամ ընտրվել են ուղղակիորեն և ունեն ընտրական մանդատ տեղական կամ տարածքային իշխանությունում կամ ուղղակի քաղաքական պատասխանատվություն ունեն ընտրված ժողովի առջև: Ներկայացուցիչներն ու նրանց փոխանորդները խմբավորվում են ազգային պատվիրակություններում ու քաղաքական խմբերում և բաժանվում են Կոնգրեսի երկու պալատների՝ Տեղական իշխանությունների պալատի և Տարածաշրջանների պալատի միջև: Կոնգրեսը յուրաքանչյուր պալատի անդամներից հաջորդաբար ընտրում է Նախագահ՝ երկու տարի ժամկետով:

Կոնգրեսը գումարվում է Ստրասբուրգում տարեկան երկու լիակազմ նստաշրջանով՝ գարնանը և աշնանը: Այս նստաշրջանների ժամանակ այն անցկացնում է թեմատիկ քննարկումներ, քննում է զեկույցների նախագծերն ու ընդունում հանձնարարականներ և բանաձևեր: Այն հրավիրում է ազգային կառավարությունների և տեղական ու տարածքային իշխանությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև եվրոպական տարբեր կազմակերպություններից պատվիրակությունների. ոչ անդամ պետությունների պատվիրակները նույնպես մասնակցում են այս նստաշրջաններին՝ որպես դիտորդներ:

Կոնգրեսի գերակայություններն արտացոլող երեք հանձնաժողով

Կոնգրեսի աշխատանքը կազմակերպվում է երեք հանձնաժողովներով՝ Մշտադիտարկման (մոնիտորինգի) հանձնաժողով, Կառավարման հանձնաժողով և Ընթացիկ հարցերի հանձնաժողով:

Անդամ պետությունների կողմից Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով նախատեսված պարտավորությունների և հանձնառությունների կատարման հանձնաժողովը (մոնիտորինգի հանձնաժողով), մասնավորապես պատասխանատու է Խարտիայի կիրառումը մշտադիտարկելու, ինչպես նաև Եվրոպայում ռեգիոնալացման զարգացման, Եվրոպայում տեղական և տարածքային ժողովրդավարության իրավիճակի վերաբերյալ զեկույցներ նախապատրաստելու և անդամ պետություններում տեղական և տարածքային ժողովրդավարությանն առնչվող առանձին հարցերի մշտադիտարկման համար:
Կառավարման հանձնաժողովը պատասխանատու է այն հարցերի համար, որոնք դասվում են Կոնգրեսի կանոնադրական մանդատի շրջանակներում, ինչպես՝ կառավարում, հանրային ֆինանսներ, միջսահմանային և միջտարածքային համագործակցություն, էլ-ժողովրդավարություն, ինչպես նաև քաղաքացիների մասնակցություն և միջկառավարական մարմինների հետ համագործակցություն:
Ընթացիկ հարցերի հանձնաժողովը պատասխանատու է տեղական և տարածքային իշխանությունների դերի ուսումնասիրության համար՝ մեր հասարակության մեծ մարտահրավերների հետ կապված, և այնպիսի թեմատիկ խնդիրների վերաբերյալ աշխատանքների նախապատրաստման համար, ինչպես՝ սոցիալական համախմբում, կրթություն, միջմշակութային երկխոսություն, երիտասարդություն, միգրանտների ինտեգրում, երեխաների պաշտպանություն, պայքար բացառման դեմ՝ Եվրոպայի խորհրդի հիմնարար արժեքների տեսանկյունից:
Կոնգրեսը նաև ստեղծել է

Երիտասարդության մասնակցության խնդիրը Կոնգրեսի գերակայությունների թվում է:

Կանոնադրական հարթակ (ֆորում), որը կազմված է բոլոր ազգային պատվիրակությունների ղեկավարներից և Բյուրոյի 17 անդամներից, ովքեր նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում գործում են Կոնգրեսի անունից:

Արդար ներկայացվածություն

Քաղաքական, աշխարհագրական և գենդերային հավասարակշռության առումով յուրաքանչյուր պատվիրակությունում պետք է լինի արդար ներկայացվածություն: Կոնգրեսի 2008թ. նորացված խարտիան յուրաքանչյուր պատվիրակության համար սահմանում է վատ ներկայացված սեռի 30% նվազագույն շեմ:

Կոնգրեսում առկա է քաղաքական չորս խումբ՝

EPP/CD՝ Եվրոպական ժողովրդական կուսակցության խումբը Կոնգրեսում

SOC՝ Սոցիալիստական խումբ

ILDG՝ Անկախ և ազատական ժողովրդավարական խումբ

ECR՝ Եվրոպական պահպանողականների և բարեփոխականների խումբ

ՓԱՍՏԵՐ ԵՎ ԹՎԵՐ

Տեղական և տարածքային ժողովրդավարության 50 տարի

1957թ. Տեղական իշխանությունների առաջին համաժողով

1985թ. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ընդունում

1990թ. Ընտրությունների մշտադիտարկման առաջին զեկույց

1993թ. Տեղական ժողովրդավարության առաջին գործակալության ստեղծում

1994թ. Մշտական համաժողովը դառնում է Եվրոպայի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես

1995թ. Տեղական ժողովրդավարության վերաբերյալ մշտադիտարկման առաջին զեկույց

2005թ. Համագործակցության մասին համաձայնություն Եվրոպական միության Տարածաշրջանների հանձնաժողովի հետ

2009թ. Նորացված պայմանագիր Տարածաշրջանների հանձնաժողովի հետ

2010-2012թթ. Կոնգրեսի կառույցների, վարչական կանոնների և ընթացակարգերի բարեփոխում

648 ընտրված ներկայացուցիչ

47 ազգային պատվիրակություն

200 000 տարածքային համայնք

50 զեկույց, բանաձև և հանձնարարական է ընդունվում ամեն տարի

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ (և ներկայացուցիչների թիվը)

Ալբանիա (4)
Անդորա (2)
Հայաստան (4)
Ավստրիա (6)
Ադրբեջան (6)
Բելգիա (7)
Բոսնիա և Հերցեգովինա (5)
Բուլղարիա (6)
Խորվաթիա (5)
Կիպրոս (3)
Չեխիայի Հանրապետություն (7)
Դանիա (5)
Էստոնիա (3)
Ֆինլանդիա (5)
Ֆրանսիա (18)
Վրաստան (5)
Գերմանիա (18)
Հունաստան (7)
Հունգարիա (7)
Իսլանդիա (3)
Իռլանդիա (4)
Իտալիա (18)
Լատվիա (3)
Լիխտենշտեյն (2)
Լիտվա (4)
Լյուքսեմբուրգ (3)
Մալթա (3)
Մոլդովայի Հանրապետություն (5)
Մոնակո (2)
Մոնտենեգրո (3)
Նիդեռլանդներ (7)
Նորվեգիա (5)
Լեհաստան (12)
Պորտուգալիա (7)
Ռումինիա (10)
Ռուսաստանի Դաշնություն (18)
Սան Մարինո (2)
Սերբիա (7)
Սլովակիա (5)
Սլովենիա (3)
Իսպանիա (12)
Շվեդիա (6)
Շվեյցարիա (6)
Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետություն (3)
Թուրքիա (18)
Ուկրաինա (12)
Միացյալ Թագավորություն (18)

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

The Congress / Le Congrès
COUNCIL OF EUROPE / CONSEIL DE L'EUROPE

Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի քարտուղարություն

Avenue de l'Europe - F-67075 Strasbourg Cedex - France

Հեռ.՝ +33 (0)3 88 41 21 10
Ֆաքս՝ +33 (0)3 88 41 37 47

congress.web@coe.int
www.coe.int/congress

PREMS019015

Publication: July 2015 / Editing: Congress of Local and Regional Authorities of the Council of Europe
Photos: Council of Europe

HYE